գանուում, Գահիրէ, Սուէզ, Պորտ-Սուդան, Խարտում ևլն։ Ամէն տեղ եղած եկեղեցական խնդիրները անձամբ քննել, մի քանի տեղերում նոր եկեղեցիների հիմքը դրել, առաջնորդներ և յաջորդներ կարգել և միաբարելով իւր հօտը վերադարձել Աղեքսանդրիա։ Այս շրջագայութիւնը մանաւանդ շահեկան է եղել և այն կողմից, որ մարդիկ է գտել Երուսաղէմի միաբանութեան մեծագումար նուէրներ տուող։

Երուսաղէմի եկեղեցի

Երուսաղէմի պատրիարքութիւնը յատուկ ուշադրութիւն է դարձրել դպրոցական գործի վերայ, որով ուզում է մրցել կաթոլիկ և պրոտեստանտ եկեղեցու հետ։ Նա իւր միջոցներով պահում է 78 դպրոցներ 59 գիւղերում և քաղաքներում։ Տղայոց դպրոց պահում է 59 հատ, 109 ուսուցիչներով և 2928 աշակերտներով և օրիորդաց 19 հատ 44 դասատուներով և 1365 աշակերտուհիներով։ Այս դպրոցների մեծագոյն մասը տարրական են։ Միայն ս. Խաչի աստուածաբանական դպրոցը միջնակարգ է, և մի քահանայացուների դպրոց Երուսաղէմում և մի գործնական Յոպպէում չորս դասեան (պրոգիմնազիայ)։

Դպրոցների տարեկան ծախսն է 80,000 ր. որ ամբողջովին պատրիարքութիւնն է հոգում իւր եկամուտներից։ Ուսանելի լեզուներն են արաբերէն, յունարէն, թիւրքերէն, ֆրանսերէն և անգլիերէն, վերջին երկու լեզուները մեծ հրապոյր են ներկայացնում տեղացիների համար կաթոլիկաց և պրոտեստանտների դպրոցները յաճախելու, ուստի ստիպուած են եղել իրենք էլ մացնել։

Ի՞նչ են անում մեր Երուսաղէմի միաբանները այս մրցման մէջ, չլինի թէ այնտեղ էլ մարդոցները առատ հունձ են անում, ինչպէս մեր աչքի տակ հէնց էջմիածնում հայերէն սովորելու անուան տակ ապրելով վերսկսել է պրոտեստանտական առաքելութիւնը մի ինչ որ բժիշկ և ինչպէս լսում ենք արդէն հետևողների շրջան կազմել։

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Հռոմի պապը՝ Պիոս Ժ-րդ պրաւոսլաւ արևելքի վերաբերմամբ վոխել է եկեղեցական դիւանագիտութիւնը, որին հետևում էր Լևոն ԺԳ-րդ պապը։ Վերջինս արևելքը Հռոմի աթոռին